

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՍԱՌՑԱԼԵԶՎԱԿՆԵՐԸ



Հաճախ կարելի է տեսնել շենքերի տանիքներից կախված սառչալեզվակներ, որոնք վտանգավոր են մարդկանց համար: Իսկ ե՞րբ են առաջանում դրանք, ձնհալի ժամանա՞կ, թե՞ սառնամանիքին:

Սառչալեզվակ առաջանալու համար անհրաժեշտ է, որ օդի ջերմաստիճանը լինի զրոյից բարձր, որպեսզի տանիքի ձյունը հալվի, և զրոյից ցածր, որպեսզի առաջացած ջուրը սառչի: Դա սովորաբար տեղի է ունենում 0°C ջերմաստիճանում, ձնհալի ժամանակ: Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնելով թեք տանիքին՝ հալեցնում է նրա վրայի ձյունը: Առաջացած ջուրը հոսում է և կաթիլ-կաթիլ կախվում է տանիքի եզրից: Այստեղ ջերմաստիճանը զրոյից ցածր է, և կաթիլը սառչում է: Նրա վրա հոսում է երկրորդ կաթիլը և սառչում: Այսպես, աստիճանաբար երկարում և հաստանում է սառչե լեզվակը: